

**ԵՊՀ բիզնես ինկուբատորը և տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը համատեղ առաջարկում են «Փայթն փաթեթի կիրառությունները բիզնես անալիտիկայի խնդիրների համար» դասընթացը:**

### **Դասընթացի մասին**

Դասընթացը մշակված է «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագրի շրջանակում: «Փայթն փաթեթի կիրառությունները բիզնես անալիտիկայի խնդիրների համար» դասընթացը նախատեսված է ԵՊՀ ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ հետազոտողների համար, որոնք հակված են իրենց գիտելիքները և հետազոտության արդյունքները օգտագործելու բիզնեսում, մասնավորապես՝ ստարտափների ստեղծման համար: Դասընթացին կարող են մասնակցել նաև ԵՊՀ-ի դասախոսները: Մասնակցության համար նախնական գիտելիքներ չեն պահանջվում, այնուհանդերձ անհրաժեշտ է Windows և Microsoft Office ծրագրերի իմացություն:

### **Դասընթացի նպատակը**

Դասընթացի նպատակներն են մասնակիցներին ծանոթացնել «Փայթն» ծրագրի մի շարք գործիքների, որոնք կիրառվում են բիզնեսի վերլուծության համար, ինչպես նաև տրամադրել որոշ բազային գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են «Փայթն» ծրագիրն առաջին անգամ օգտագործելու ժամանակ: Դասընթացը հիմնված է կիրառական օրինակների վրա, որոնք կատարվելու են համակարգչային լսարանում:

### **Դասախոսի մասին**

«Փայթն փաթեթի կիրառությունները բիզնես անալիտիկայի խնդիրների համար» դասընթացը վարելու է ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսոր, ֆ.մ.գ.թ., տ.գ.դ, ԵՊՀ բիզնես ինկուբատորի տնօրեն, «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագրի ղեկավար Ռուբեն Գևորգյանը:

### **Դասընթացի թեմաները**

1. Փայթն ծրագրի միջավայրը: Բազային գործողությունները:
2. Pandas, numPy, matplotlib փաթեթների մասին տեղեկություններ և որոշ ֆունկցիաների օգտագործման օրինակներ:
3. Տվյալների բազաների հետ աշխատանքի տարրեր: Տվյալների ներբեռնում:
4. Տվյալների նախնական մշակման և վիզուալիզացիայի տարրեր:
5. Բիզնես օրինակի քննարկում:

### **Դասընթացի ժամկետները և տևողությունը**

Դասընթացի սկիզբը նախատեսված է ապրիլի 17-ին: Այն տեղի է ունենալու երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 15:30-17:00 (յուրաքանչյուրը երկու ակադեմիական ժամ):

Ընդհանուր տևողությունը 5 օր է: Դասերը կանցկացվեն ԵՊՀ 6-րդ մասնաշենքում՝ Աբովյան 52 հասցեում:

Մասնակցության համար անհրաժեշտ է գրանցվել մինչև ապրիլի 15-ը՝ լրացնելով [ձևաթուղթը](#):